14.05.2024. N 122-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի ԹԻՎ 167-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով.

Հրամայում եմ.

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2021 թվականի դեկտեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի տարվա ստորաբաժանումներ և տարվա քննիչ ճանաչելու կարգը, պայմանները, պարգևագրերի նկարագրերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2015 թվականի հունիսի 11-ի թիվ 56-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 167-Լ հրամանում (այսուհետ՝ հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) հրամանի վերնագրում, հրամանի N 1 հավելվածի վերնագրում, հրամանի 1-ին կետում «տարվա ստորաբաժանումներ և տարվա քննիչ» բառերը փոխարինել «տարվա ստորաբաժանումներ, տարվա քննիչ և տարվա լավագույն ստորաբաժանում, տարվա լավագույն քննիչ» բառերով.

2) հրամանի 2-րդ կետում և հրամանի N 2 հավելվածի վերնագրում «և «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի տարվա քննիչ»» բառերը փոխարինել «, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի տարվա քննիչ», «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի տարվա լավագույն

ստորաբաժանում» և «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի տարվա լավագույն քննիչ»» բառերով.

3) հրամանի N 1 հավելվածի 1-ին և 2-րդ գլուխները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԳԼՈՒԽ 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՏԱՐՎԱ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ, ՏԱՐՎԱ ՔՆՆԻՉ ԵՎ ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ, ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՔՆՆԻՉ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԿԱՐԳԸ

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում (այսուհետ՝ Կոմիտե) յուրաքանչյուր տարի սույն կարգի համաձայն ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) կողմից ընտրվում են.

1) Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության տարվա ստորաբաժանում ճանաչելու նպատակով՝ հետևյալ ստորաբաժանումներից մեկը.

ա. Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության կայազորային վարչություն,

բ. Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության կայազորային քննչական բաժիններ.

2) Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության տարվա ստորաբաժանում ճանաչելու նպատակով՝ Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ստորաբաժանումներից (բացառությամբ ծանր հանցագործությունների քննության բաժնի) մեկ ստորաբաժանում.

3) Կոմիտեի մարզային քննչական վարչությունների տարվա ստորաբաժանում ճանաչելու նպատակով՝ մարզային քննչական վարչություններից մեկ ստորաբաժանում.

4) Կոմիտեի տարվա քննիչ ճանաչելու նպատակով՝ մեկ քննիչ հետևյալ ստորաբաժանումներից.

ա. Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության կայազորային վարչություն, կայազորային քննչական բաժիններ,

բ. Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ստորաբաժանումներ (բացառությամբ ծանր հանցագործությունների քննության բաժնի),

գ. Կոմիտեի մարզային քննչական վարչություններ.

5) Կոմիտեի տարվա լավագույն ստորաբաժանում ճանաչելու նպատակով՝ հետևյալ ստորաբաժանումներից մեկը.

ա. Կոմիտեի կենտրոնական մարմնի գլխավոր վարչությունների ստորաբաժանումներ (բացառությամբ տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչության, հատուկ հանձնարարություններով գլխավոր վարչության կազմակերպական-վերլուծական և քրեագիտական վարչության),

բ. Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության հատկապես կարևոր գործերի քննության վարչություն,

գ. Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների քննության բաժին.

6) Կոմիտեի տարվա լավագույն քննիչ ճանաչելու նպատակով՝ մեկ քննիչ հետևյալ ստորաբաժանումներից.

ա. Կոմիտեի կենտրոնական մարմնի գլխավոր վարչությունների ստորաբաժանումներ (բացառությամբ տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչության, հատուկ հանձնարարություններով գլխավոր վարչության կազմակերպական-վերլուծական և քրեագիտական վարչության),

բ. Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության հատկապես կարևոր գործերի քննության վարչություն,

գ. Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների քննության բաժին:

2. Հանձնաժողովը բաղկացած է 10 անդամից: Հանձնաժողովի նախագահն է Կոմիտեի նախագահը, ի պաշտոնե անդամներն են՝ Կոմիտեի նախագահի տեղակալները, կենտրոնական մարմնի գլխավոր վարչությունների պետերը և Երևան քաղաքի քննչական վարչության պետը:

3. Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության տարվա ստորաբաժանում, Երևան քաղաքի քննչական վարչության տարվա ստորաբաժանում, մարզային քննչական վարչությունների տարվա ստորաբաժանում (այսուհետ՝ միասին Կոմիտեի տարվա ստորաբաժանում) և Կոմիտեի տարվա քննիչի տվյալները հանձնաժողովին ներկայացնելու համար պատասխանատու ստորաբաժանումներն են՝

1) Կոմիտեի հատուկ հանձնարարություններով գլխավոր վարչությունը՝ Կոմիտեի տարվա ստորաբաժանում ճանաչելու նպատակով թեկնածություն ներկայացնելու համար.

2) Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության կայազորային վարչությունը, կայազորային քննչական բաժինները, Երևան քաղաքի քննչական վարչության ստորաբաժանումները (բացառությամբ Երևան քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնի) և մարզային քննչական վարչությունները՝ Կոմիտեի տարվա քննիչ ճանաչելու նպատակով թեկնածություն ներկայացնելու համար:

4. Կոմիտեի տարվա լավագույն ստորաբաժանում և Կոմիտեի տարվա լավագույն քննիչի տվյալները հանձնաժողովին ներկայացնելու համար պատասխանատուներն են՝

Կոմիտեի նախագահի համապատասխան ոլորտը համակարգող տեղակալներն՝ իրենց համակարգման ոլորտում գտնվող ստորաբաժանումների մասով, իսկ Կոմիտեի նախագահի համակարգման ոլորտում գտնվող ստորաբաժանումների դեպքում՝ այդ ստորաբաժանումների պետերը՝ տարվա լավագույն ստորաբաժանում ճանաչելու նպատակով թեկնածություն և լավագույն քննիչ ճանաչելու նպատակով թեկնածու ներկայացնելու համար:

5. Մինչև հաջորդ տարվա հունվարի 20-ը՝ սույն հավելվածի 3-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված պատասխանատու ստորաբաժանումը Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության կայազորային վարչության, կայազորային քննչական բաժինների, Երևան քաղաքի քննչական վարչության ստորաբաժանումների (բացառությամբ ծանր հանցագործությունների քննության բաժնի) և մարզային քննչական վարչությունների գործունեության վերաբերյալ սույն հավելվածի 16-րդ, 18-րդ և 20-րդ կետերով նախատեսված տվյալները և տեղեկանքներն ուղարկում է հանձնաժողովին՝ Կոմիտեի տարվա ստորաբաժանում ընտրելու նպատակով:

6. Մինչև հաջորդ տարվա հունվարի 20-ը՝ սույն հավելվածի 3-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված պատասխանատու ստորաբաժանումները քննարկում և համապատասխան ոլորտը համակարգող՝ Կոմիտեի նախագահի տեղակալի համաձայնությամբ հանձնաժողովին են ներկայացնում Կոմիտեի տարվա քննիչի մեկական թեկնածուի տվյալ՝ հավաստող զեկուցագրով և սույն հավելվածի 17-րդ, 19-րդ և 20-րդ կետերով նախատեսված տվյալները և տեղեկանքները:

7. Մինչև հաջորդ տարվա հունվարի 20-ը՝ սույն կարգի 4-րդ կետով նախատեսված պաշտոնատար անձինք քննարկում և հանձնաժողովին են ներկայացնում կենտրոնական մարմնի գլխավոր վարչությունների ստորաբաժանումների (բացառությամբ տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչության, հատուկ հանձնարարություններով գլխավոր վարչության կազմակերպական-վերլուծական և քրեագիտական վարչության), Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության հատկապես կարևոր գործերի քննության և Երևան քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնի կատարած աշխատանքների և լուծված խնդիրների վերաբերյալ տեղեկանքը՝ Կոմիտեի տարվա լավագույն ստորաբաժանում ճանաչելու նպատակով:

Մինչև հաջորդ տարվա հունվարի 20-ը՝ սույն կարգի 4-րդ կետով նախատեսված պաշտոնատար անձինք՝ համապատասխան ոլորտը համակարգող Կոմիտեի նախագահի տեղակալի համաձայնությամբ, իսկ Կոմիտեի նախագահի համակարգման ոլորտում գտնվող ստորաբաժանումների դեպքում՝ այդ ստորաբաժանումների պետերը քննարկում և հանձնաժողովին են ներկայացնում Կոմիտեի տարվա լավագույն քննիչի մեկական թեկնածուի տվյալ՝ նրա կատարած աշխատանքների և լուծված խնդիրների վերաբերյալ տեղեկանքով:

8. Հանձնաժողովն ուսումնասիրում է սույն կարգով նախատեսված կարգով ներկայացված Կոմիտեի տարվա ստորաբաժանման, տարվա քննիչի, ինչպես նաև տարվա լավագույն ստորաբաժանման և տարվա լավագույն քննիչի համար ներկայացված թեկնածությունների վերաբերյալ տվյալները, հիմնավորող փաստաթղթերը և կայացնում Կոմիտեի տարվա ստորաբաժանում, Կոմիտեի տարվա քննիչ, Կոմիտեի տարվա լավագույն ստորաբաժանում և Կոմիտեի տարվա լավագույն քննիչ ճանաչելու վերաբերյալ որոշում:

9. Հանձնաժողովի որոշումն ընդունվում է տվյալ նիստին մասնակցող հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ: Հավասար ձայների դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը որոշիչ է:

10. Կայացված որոշման վերաբերյալ կազմված արձանագրությունը մինչև հունվարի 30-ն ուղարկվում է Կոմիտեի անձնակազմի կառավարման վարչություն:

11. Կոմիտեի անձնակազմի կառավարման վարչությունը նախապատրաստում և Կոմիտեի նախագահին է ներկայացնում Կոմիտեի տարվա ստորաբաժանում, տարվա քննիչ, ինչպես նաև Կոմիտեի լավագույն ստորաբաժանում և լավագույն քննիչ ճանաչելու վերաբերյալ հրամանների նախագծերը:

12. Կոմիտեի անձնակազմի կառավարման վարչությունը Կոմիտեի տարվա և Կոմիտեի տարվա լավագույն ստորաբաժանումների անվանումները, ինչպես նաև Կոմիտեի տարվա և Կոմիտեի տարվա լավագույն քննիչների լուսանկարները, կենսագրական տվյալներն ուղարկում է Կոմիտեի արտաքին կապերի, արարողակարգի և կազմակերպչական հարցերի վարչություն՝ Կոմիտեի պաշտոնական կայքում տեղադրելու համար:

13. Կոմիտեի տարվա ստորաբաժանում և տարվա քննիչ, ինչպես նաև տարվա լավագույն ստորաբաժանում և տարվա լավագույն քննիչ ճանաչելու մասին հրամանները հրապարակվում են Կոմիտեի կոլեգիայի նիստում, որտեղ Կոմիտեի տարվա և Կոմիտեի տարվա լավագույն ստորաբաժանումներին, ի դեմս ստորաբաժանումների պետերի, և Կոմիտեի տարվա և Կոմիտեի տարվա լավագույն քննիչներին համապատասխանաբար հանձնվում են «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության տարվա ստորաբաժանում», «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության տարվա ստորաբաժանում», «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մարզային քննչական վարչությունների տարվա ստորաբաժանում», «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի տարվա լավագույն ստորաբաժանում», «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի տարվա քննիչ» և «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի տարվա լավագույն քննիչ» անվանումներով պարգևագրեր:

14. Կոմիտեի տարվա և տարվա լավագույն քննիչ ճանաչված ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք, Կոմիտեի տարվա և տարվա լավագույն ստորաբաժանումներ ճանաչված ստորաբաժանումների պետերը, ինքնավար պաշտոն զբաղեցնող մյուս անձինք, ինչպես նաև տվյալ ստորաբաժանումների աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների քաղաքացիական ծառայողները և տեխնիկական սպասարկում իրականացնող անձինք կարող են խրախուսվել Կոմիտեի նախագահի կողմից:

ԳԼՈՒԽ 2. ԿՈՄԻՏԵԻ ՏԱՐՎԱ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ՏԱՐՎԱ ՔՆՆԻՉ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

15. Կոմիտեի տարվա ստորաբաժանում և տարվա քննիչ ճանաչելու նպատակով ընտրությունը կատարվում է սույն գլխով նախատեսված տվյալների ուսումնասիրությունների հիման վրա:

16. Կոմիտեի տարվա ստորաբաժանում ճանաչելու նպատակով ներկայացվում են հաշվետու տարվա կտրվածքով տվյալ ստորաբաժանմանը վերաբերելի հետևյալ տվյալները՝

1) քննված քրեական վարույթների թիվը, ընթացքը և դրանք ավարտելու ժամկետներն՝ ըստ հանցանքի տեսակները (ոչ մեծ ծանրության, միջին ծանրության, ծանր և առանձնապես ծանր).

2) կազմված մեղադրական եզրակացությունների, բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու համար եզրափակիչ ակտերի (բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին որոշումների) թիվը.

3) մեղադրական եզրակացությամբ նախաքննությունն ավարտած քրեական վարույթներով մեղադրյալի կարգավիճակ ստացած անձանց թիվը՝ նշելով ըստ դրվագների, թե որ հոդվածներով է մեղադրանքներ ներկայացվել.

4) կարճված քրեական վարույթների թիվը՝ նշելով կարճման որոշումների հիմքերը՝ ռեաբիլիտացնող և ոչ ռեաբիլիտացնող, ինչպես նաև ոչ ռեաբիլիտացնող հիմքերով կարճված վարույթներով այն անձանց թիվը, որոնց նկատմամբ կայացվել է կարճման որոշում.

5) բացահայտված քրեական վարույթների թիվը.

6) քրեական վարույթներով կալանքը որպես խափանման միջոց կիրառելու, կալանքի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ դատարան ուղարկված միջնորդությունների, ինչպես նաև դատարանի կողմից բավարարված միջնորդությունների թիվը.

7) քրեական վարույթներով դատարանի թույլտվությամբ իրականացվող քննչական գործողությունների, այդ թվում՝ գաղտնի քննչական գործողությունների, կատարման համար դատարան ներկայացված միջնորդությունների, ինչպես նաև դատարանի կողմից բավարարված միջնորդությունների թիվը.

8) քրեական վարույթներով հանրային քրեական հետապնդում հարուցելու, չհարուցելու կամ այն դադարեցնելու մասին միջնորդությունների, ինչպես նաև բավարարված միջնորդությունների թիվը.

9) քրեական վարույթներով դատախազի կողմից չհաստատված մեղադրական եզրակացությունների, բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու համար եզրափակիչ ակտերի թիվը (ներկայացնելով դատախազի կողմից մեղադրական եզրակացությունը կամ եզրափակիչ ակտը չհաստատելու մասին որոշումների պատճենները).

10) քրեական վարույթներով ձերբակալված անձանց թիվը՝ նշելով հիմքերը.

11) քրեական վարույթներով բացահայտված գույքային վնասի վերականգնման ուղղությամբ ձեռնարկված միջոցները.

12) քրեական վարույթներով ստեղծված քննչական խմբերում մասնակցության թիվը.

13) առավել բարդ, բազմադրվագ կամ հասարակական հնչեղություն ունեցող դեպքերով քրեական վարույթներով նախաքննության իրականացումը.

14) Կոմիտեի գործունեությանն առնչվող ոլորտներում Հայաստանի Հանրապետության օրենսդրության կատարելագործման վերաբերյալ առաջարկությունները.

15) առերևույթ հանցանքի մասին ստացված հաղորդումների թիվը, ընթացքը.

16) այն հաղորդումների թիվը, որոնցով քրեական վարույթ չի նախաձեռնվել (այդ թվում՝ հսկող դատախազի կողմից քրեական վարույթ չնախաձեռնելու օրինականությունը հաստատված):

17. Կոմիտեի տարվա քննիչ ճանաչելու նպատակով ներկայացվում են հաշվետու տարվա կտրվածքով տվյալ ինքնավար պաշտոն զբաղեցնող անձին վերաբերելի սույն կարգի 16-րդ կետով նախատեսված տեղեկությունները, այդ թվում՝

1) հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքները պարզելու և անհրաժեշտության դեպքում համապատասխան անձանց այդ հանգամանքները վերացնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու մասին միջնորդագրերի թիվը.

2)մինչդատական վարույթ իրականացնելիս քրեաիրավական և քրեադատավարական նորմերի կիրառության էական խախտումները.

3) կարգապահական տույժերն ու խրախուսումները:

18. Կոմիտեի տարվա ստորաբաժանումներ ի ընտրության համար սույն կարգի 16-րդ կետի 1-4-րդ, 8-րդ, 10-րդ ենթակետերով նախատեսված տվյալները (ցուցանիշները) ներկայացվում են համապատասխանաբար Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության ստորաբաժանումներում (բացառությամբ Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության հատկապես կարևոր գործերի քննության վարչության), Երևան քաղաքի քննչական վարչության ստորաբաժանումներում (բացառությամբ Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնի), մարզային քննչական վարչություններում հաշվետու ժամանակահատվածի համար գրանցված միևնույն ցուցանիշների ընդհանուր հանրագումարում (ինչպես բացարձակ թվերով, այնպես էլ տոկոսային արտահայտությամբ):

19. Կոմիտեի տարվա քննիչի համար առաջադրվող թեկնածուի համար սույն կարգի 16-րդ կետի 1-4-րդ, 8-րդ, 10-րդ ենթակետերով նախատեսված ցուցանիշները ներկայացվում են տվյալ ստորաբաժանման, ինչպես նաև համապատասխանաբար Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության ստորաբաժանումների (բացառությամբ Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության հատկապես կարևոր գործերի քննության վարչության) կամ Երևան քաղաքի քննչական վարչության ստորաբաժանումների (բացառությամբ Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության

ծանր հանցագործությունների քննության բաժնի) կամ մարզային քննչական վարչության և դրանց ստորաբաժանումներում հաշվետու ժամանակահատվածի համար գրանցված միևնույն ցուցանիշների ընդհանուր հանրագումարում (ինչպես բացարձակ թվերով, այնպես էլ տոկոսային արտահայտությամբ):

20. Սույն կարգի 16-րդ կետի 5-րդ ենթակետի, 12-րդ, 13-րդ ենթակետերով, 17-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների հետ ներկայացվում են նաև տեղեկանքներ:».

4) հրամանի N 2 հավելվածի 1-ին գլխի վերնագրում ««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՔՆՆՉԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐՎԱ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ» բառերից հետո լրացնել «ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ»» բառերը.

5) հրամանի N 2 հավելվածի 1-ին կետում «և «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մարզային քննչական վարչությունների տարվա ստորաբաժանում»» բառերը փոխարինել «, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մարզային քննչական վարչությունների տարվա ստորաբաժանում» և «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի տարվա լավագույն ստորաբաժանում» բառերով.

6) հրամանի N 2 հավելվածի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Շրջանակաձև դետալի վերին հատվածի արտաքին եզրագծից դեպի կենտրոն՝ 2 միլիմետր հեռավորությամբ, շրջանաձև փորագրված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ» գրառումը, որից դեպի կենտրոն 3 միլիմետր հեռավորությամբ (ըստ պարգևագրի տեսակի) փորագրված է համապատասխանաբար «ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ» (Ձև 1), «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՔՆՆՉԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ» (Ձև 2), «ՄԱՐԶԱՅԻՆ ՔՆՆՉԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» (Ձև 3) և «ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ» գրառումները (Ձև 3.1):».

7) հրամանի N 2 հավելվածի 4-րդ կետի 1-ին նախադասությունում ««ՏԱՐՎԱ» գրառումը» բառերից հետո լրացնել «, իսկ տարվա լավագույն ստորաբաժանման համար նախատեսված պարգևագրում՝ «ԼԱՎԱԳՈՒՅՆ» գրառումը» բառերը.

8) հրամանի N 2 հավելվածի 6-րդ կետում «գրառումները» բառից առաջ լրացնել «և «ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ»» բառերը.

9) հրամանի N 2 հավելվածի 2-րդ գլխի վերնագրում «ՊԱՐԳԵՎԱԳՐԻ» բառից առաջ լրացնել «ԵՎ «ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՔՆՆԻՉ»» բառերը.

10) հրամանի N 2 հավելվածի 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի տարվա քննիչ» (Ձև 4) և «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի տարվա լավագույն քննիչ» (Ձև 4.1) պարգևագիրն (այսուհետ՝ միասին «Տարվա քննիչ» պարգևագիր) իրենից ներկայացնում է 340 x 340 միլիմետր չափսերով քառակուսի ցուցանակ՝ վրադիր երկու դետալներով:».

11) հրամանի N 2 հավելվածի 11-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«11. Շրջանակաձև դետալի ստորին հատվածում՝ արտաքին եզրագծից դեպի կենտրոն 3.5 միլիմետր հեռավորությամբ՝ շրջանի ստորին հատվածի մեջտեղում, շրջանաձև (ըստ պարգևագրի տեսակի) փորագրված է «ՏԱՐՎԱ ՔՆՆԻՉ», «ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՔՆՆԻՉ» գրառումները: Գրառումների տառաչափը յոթ միլիմետր է (թույլատրելի շեղումը ± 0,2 միլիմետր):».

12) հրամանի N 2 հավելվածի 13-րդ կետում ««ԿՈՄԻՏԵԻ ՏԱՐՎԱ ՔՆՆԻՉ» գրառումները» բառերը փոխարինել «և ըստ պարգևագրի տեսակի՝ «ԿՈՄԻՏԵԻ ՏԱՐՎԱ ՔՆՆԻՉ», «ԿՈՄԻՏԵԻ ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՔՆՆԻՉ» գրառումները:».

13) հրամանի N 2 հավելվածը N 3-րդ և N 4-րդ Ձևերից հետո համապատասխանաբար լրացնել N 3.1-ին և N 4.1-ին Ձևերով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի տեղակալներին, խորհրդականներին, մամուլի քարտուղարին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի հիմնական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների պետերին:

Ա. ՔՅԱՐԱՄՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
քննչական կոմիտեի նախագահի
__ __ 2024թ.
N -Լ հրամանի

«Ձև 3.1

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ» ՊԱՐԳԵՎԱԳՐԻ

Ձ Ե Վ

Ձև 4.1

Ձ Ե Վ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՔՆՆԻՉ» ՊԱՐԳԵՎԱԳՐԻ

»